02.12.26 - 02.12.26
15:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 405 լսարան

Ս.թ. դեկտեմբերի 2-ին՝ ժամը 15:00-ին, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 405 լսարանում կանցկացվի հանդիպում-քննարկում անվանի մաթեմատիկոս, Շվեդիայի թագավորական տեխնոլոգիական ինստիտուտի (KTH) պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ԵՊՀ պատվավոր դոկտոր Հենրիկ Շահգուլյանի հետ:

ԵՊՀ ակադեմիական գրագրության կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվող հանդիպմանը Հենրիկ Շահգուլյանը հանդես կգա «Հետազոտության ապագայի ուղենշումը» («Navigating the Future of Research») թեմայով բանախոսությամբ:

Հանդիպմանը հրավիրվում են ԵՊՀ ասպիրանտները, հայցորդներն ու երիտասարդ հետ

Քննարկումը կանցկացվի ազատ ձևաչափով. մասնակիցները հնարավորություն կունենան հարցեր ուղղելու բանախոսին, փոխանակելու գաղափարներ և մասնակցելու գիտական ու միջգիտակարգային քննարկումների:

Հանդիպման նպատակն է խթանել գիտական երկխոսությունն ու տարբեր գիտակարգերի ներկայացուցիչների միջև փորձի փոխանակումը՝ հնարավորություն ընձեռելով անմիջականորեն հաղորդակցվելու միջազգային գիտական ունեցող գիտնականի հետ:

Աշխատանքային լեզուներն են հայերենն ու անգլերենը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am